

Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Մենք է Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճատադրում: Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական կործանումից, տալով նրան տնտեսական, քաղաքական ազատություն ու զարգացման լայն հեռանկարներ: Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում 1920 թ. նոյեմբերին անմիջական շարունակությունն ու արդյունքն է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում նախապատրաստվեց 1920 թ. մայիսյան ապստամբությունում և վերջնական հաղթանակ տարավ Հայաստանի ամբողջ տերիտորիայում միայն 1921 թ. կեսերին: Այդ մեկ տարի ընդգրկող ժամանակաշրջանը նշանակալի է քաղաքացիական կռիվներով ու քաղաքական իրադարձություններով, որ մղել է հայ աշխատավոր ժողովուրդը 11-րդ կարմիր բանակի ղեկավարած օգնությամբ՝ հանուն խորհրդային իշխանության հաստատման:

Հայ ժողովրդի պատմությունը ազատագրական կռիվների պատմություն է: Սակայն 1920—21 թթ. կռիվները արմատապես տարբերվում են նախորդներից թե՛ իրենց բովանդակությամբ ու նպատակադրումով և թե՛ այդ կռիվների մեջ ընդգրկած ուժերով:

Պատմական տեսակետից այս համեմատարար կարճ ժամանակամիջոցը նյութ է հանդիսացել հայ ժողովրդական երգերի համար: Ինչպես ասվում է, ամեն ժամանակ իր երգն ունի: Այս ժամանակն էլ իր երգն ունեցավ: Երգերի մի մասը ստեղծված են դեպքերի անմիջական ազդեցությամբ, մյուս մասը՝ մի փոքր ուշ: Այդ ստեղծագործություններն այնքան էլ մեծաքանակ չեն, սակայն կաղմում են հայ ժողովրդի ռադմի ու դինլորի երգերի մի անքակտելի օղակը և ներկայացնում են ուշագրավ պատմական մշակութային արժեք:

Մայիսյան ապստամբությանը, նոյեմբերին և քաղաքացիական կռիվներին նվիրված երգերը գրի են առնվել մեծ մասամբ 30-ական թվականներին, մասամբ էլ վերջերս. դրանք հետևյալներն են. «Պուլեմոտները կրակեցին բրանևիկից»¹, «Ղուկաս Ղուկասյան»², «Աղստաֆայից բերեցին լուրը»³, «Զախմախվից անցավ ղուրքը»⁴, «Օրդուն եկավ սարի փեշեն»⁵, «Հլառա տուրան բռնել էր դուման»⁶, «Գյառնիյա պալեն թալած բալլևիկից»⁷, «Բալլևիկի ղուրքը Վեդիից ելավ»⁸, «Բաշ-Գյառնու կռիվը»⁹, «Պլիմոտներ կապեցին Քյավառու վրեն»¹⁰, «Խատիսյանը աշխարհ խափեց»¹⁰, «Օրը օրին առաջ ենք զնում»¹¹ (պատառիկ քայլերդից): Թվարկված երգերի ղգալի մասը մտել է խորհրդային ֆուլկլորին նվիրված ժողովածուի մեջ¹²:

Սրանք իրենց բնույթով վիպական երգեր են, ավելի կամ պակաս շափով հաղեցված քնարականությամբ՝ կապված կոնկրետ վայրում տեղի ունեցած մարտերի, կռիվների ու պատմական անձների գործունեության այս կամ այն ասպարիդի հետ: Նրանք միաժամանակ տեղական նշանակություն ունեցող պատմական երգեր են, սակայն իբրև այդպիսիք էլ համազգային նշա-

1 Հնադիտ. և աղգ. ինստիտուտի բանահ. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, գործ 3, տետր 31:

2 «Հայկ. խորհրդ. ֆուլկլ.», Երևան, 1938, էջ 69:

3 Հնադիտ. և աղգ. ինստ. բանահ. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, գործ 3, տ. 40:

4 Նույն տեղում, տետր 35:

5 «Հայկ. խորհրդ. ֆուլկլոր», Երևան, 1938, էջ 65:

6 Բանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆ., գ. 3, տ. 2:

7 Նույն տեղում, տետր 20:

8 Նույն տեղում, տետր 7:

9 Նույն տեղում, տետր 18:

10 Գ. Միքայելյանի դրառումներից:

11 Գ. Օղանեզով, Զինվորի օրագրից, Երևան, 1956, էջ 227:

12 «Հայկ. խորհրդ. ֆուլկլոր», Երևան, 1938, էջ 65—74:

նակություն են ձեռք բերում, քանի որ նրանցում արտացոլված դեպքերի նշանակությունն է համազգային: Պատմական այս կամ այն իրողությունը քննարկվող երդերում ճշտապես չի արձանագրվում: Երգը պատմություն չէ, այն յուրովի է մոտենում իրականությանը, հաճախ այդ իրականության մի քանի գծերը, պատմական տեղավայրի և անձերի հիշատակությունը երգին տալիս են պատմական արժեք ու կոլորիտ: Հիմնականը, տվյալ դեպքում, պատմական դարաշրջանի ոգուն հարադատ մնալն է և երևույթների ճշմարիտ զնահատականը: Այս պայմանները լիովին պահպանված են երգերում և մյուս կողմից էլ նրանք ունեն պատմական առաջել հավաստիություն, որովհետև զրանցվել են երգերի ստեղծվելուց հետո ոչ այնքան ուշ ժամանակամիջոցում, երբ երգերում դեպքերի հիշողությունները ղեկնւ չէին մարել:

Տեսնենք, թե պատմական ինչ անցքեր, ուղղվողներ ու մարտեր են նյութ հանդիսացել խնդրո առարկա երգերի համար:

Հայաստանում 1920 թ. առաջին ամիսներին հասունացել էր դիմված ապստամբության հարցը: Ենատիսյանը աշխարհ խափեց՝ երգը շատ դիպուկ է բնորոշում Հայաստանի 1920 թ. վիճակը:

Խառնիսյանը աշխարհ խափեց,

Մեր հողը ծախեց,

Միամիտներն աշխարհ կապեց,

Իրեն ազատեց¹³:

Ազգային կառավարության արտաքին և ներքին քաղաքականությամբ ստեղծված վիճակից դուրս գալու միայն մի ելք գոյություն ուներ, այն է՝ դիմված ապստամբությամբ տապալել այդ կառավարությունը և հաստատել խորհրդային կարգեր, ինչպես այդ արել էր ուսս ժողովուրդը 1917 թ. հոկտեմբերին և ինչպես այդ արեց 1920 թ. ապրիլին հարևան Ադրբեջանը: Մայիսին հայաստանի մի շարք շրջաններում հայ աշխատավորությունը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ զենքի է դիմում, Ապստամբության փոթորիկը համակում է Ալեքսանդրապոլը, Կարսը, Սարիղամիշը, Իջևանը, Քյավառը և այլն:

Ապստամբության օրերին է ստեղծվել Ենատիսյանը աշխարհ խափեց՝ երգը, որը ունի չեշտված քայլերդային բնույթ և ըստ էության ապստամբության կոչ է, ուղղված հայ աշխատավոր ժողովրդին:

Դեն, ձեն տվեմ Գյումրի, Ղազախ,

Ընկեր Լենինին,

Քաղը Բաբի վրա շրողենեմ զաշնակին¹⁴:

Գյումրի (Ալեքսանդրապոլ) և Ղազախ անունները պատահաբար չեն հիշատակված: Գյումրին մայիսյան ապստամբության օրրան էր, իսկ Ղազախում էին տեղավորված 11-րդ կարմիր բանակի զորամասերը, որոնք պետք է օգնության գալին ապստամբներին, բայց չկարողացան Գանձակում բռնկված մուսավաթական խռովության պատճառով¹⁵:

Ալեքսանդրապոլում մայիսյան ապստամբության առանձին ղրվագներին է նվիրված «Պուլեմոտները կրակեցին բրանկիկից»¹⁶ երգը: Հայտնի է, որ մայիսին հայաստանի Կոմունիստական կուսակցության աշխատավորությունը իր հսկողության տակ ստիպվեցին կայարանը և ղեկը, ապստամբների շարքերում էր ավարդան զորավար՝ զրահադեսքը՝ կապիտան Ս. Մուսայեյանի ղեկավարությամբ, որի մասին երգն ասում է. «Բրանկիկը չուտով հասավ, թափեց կրակը», և ապա հայկական առաջին հեծյալ դուռը՝ Հ. Բալբախյանի գլխավորությամբ¹⁸: Ապստամբների կողմն անցան բանակի բարձրաստիճան սպաները, ինչպես, օրինակ, Ալեքսանդրապոլի կայազորի պետ

13 Գ. Միքայելյանի գրառումներից:

14 Գ. Միքայելյանի գրառումներից:

15 Ե. Ղաբիրջանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1955, էջ 94:

16 Հնադիտ. և ազգ. ինստ. բանահյուս. արխիվ, Գ. Բարվերդյանի ֆոնդ, դործ 3, տ. 31:

17 Նույն տեղում:

18 Ե. Հաբուսյան, Հայ. ժող. պատմ., պրակ 10, Երևան, 1960, էջ 78:

դենեբրալ հաշատուրում¹⁹, իսկ զորքի և բանվորների եղբայրացումը մեծ չափեր էր ընդունել, Այդ հրևույթի հիշողությունն է պահպանված երգերում:

Ձուրք Բաշին Պալիզոնից վակալի կողմը,
 ևկողն առավ զենքը, անցավ Բալչևիկի կողմը²⁰:

«Պալիզոն» Ալեքսանդրապոլում կոչում էին Սևեբրսկի դորանոցները, ուր և տեղավորված էր զորքը: Երգում ապստամբության պարտության մասին ոչինչ չի ասվում: Երգի վերջին տողերում հիշատակվում է խմբապետ Սմբատի անունը, որի ցանկությունն է Երևանից եկող օգնության շնորհիվ «դիվան» անել ապստամբներին: Հայտնի է, սակայն, որ այդ «դիվանի» դաժան հաշ-վահարդարի հեղինակը խմբապետ Սեպուհն էր, ոչ թե Սմբատը: Մայիսմեկյան ապստամբությունը Ալեքսանդրապոլում դաժանորեն ճնշվեց, իսկ ղեկավարները զնդակահարվեցին:

Կարսի Մայիսյան ապստամբության ղեկավար Ղ. Ղուկասյանին է նվիրված «Ղ. Ղուկասյան» երգը: Ղ. Ղուկասյանը 1920 թ. մայիսի 13-ին ապստամբության պարտությունից հետո փոքրա-թիվ ընկերներով դեպի Ալեքսանդրապոլ ևսահմանելիս Արդինայի ձորում չբաղացների մոտ շրջա-պատվեց և զոհվեց²¹, Երգը ըստ էության ձոն է, ուր հիշատակվում է նաև երիտասարդ կոմու-սիստ հեղափոխական մարտիկի մահը:

Իայց նենգ ու համարդ,
 Ստոր քշեամին,
 Ուռզալք լաբեց
 Իճկեր Ղուկասյան²²:

Ժամանակագրական հաջորդականությամբ հաջորդ դեպքերը, որոնց մասին պատմում են երգերը, կարմիր բանակի և հայ պարտիզանների մոտքն է Իջևան՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, երանց կաղմից մղվող մարտերը խորհրդային կարգերի հաստատման համար Իջևանում և Դի-լիջանում: Հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար վճռական նշանակություն ունեցող այս դեպքերի շուրջն են հյուսված «Ազատաֆայից բերեցին լուրը»²³, «Զախմախվից անցավ զորքը»²⁴, «Օրդուն եկավ սարի փեշեն»²⁵, Այս երգերում հիշատակվում են նաև անցքեր, որոնք Իջևանում տեղի են ունեցել ավելի վաղ՝ մայիսյան ապստամբության օրերին: Ժամանակի տեսա-կետից որոշակի սահմանադատում չկա մայիսյան և նոյեմբերյան իրադարձությունների, մար-տերի միջև: Երգերը հավանաբար ստեղծվել են դեպքերի ոչ անմիջական ազդեցությամբ, այլ ավելի ուշ՝ հիշողության մեջ վերապրելով այդ շրջանի պատմությունը: Այսպես, օրինակ՝ Մյաս-նիկյանը Հայաստանի կառավարության ղեկավար դարձավ ոչ թե Հոկտեմբերյան հեղափոխության օրերին, այլ ավելի ուշ՝ մայիսին²⁶, Այս երևույթը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ մայիսյան ապստամբությունը Իջևանի շրջանում ճնշվեց համեմատաբար ավելի ուշ, քան Հա-յաստանի մնացած շրջաններում, իսկ պարտիզանական ջոկատները պարտությունից հետո ան-ցան Իջևանին կից Ղազախի գավառը (Սովետական Ադրբեջան) և ամեն առիթով զգացնել էին տալիս իրենց գոյությունը:

Կարմիր բանակի և հայ պարտիզանների շտաբը տեղավորված էր Ղազախ-Ազատաֆա շրջա-նում, երգը նշում է.

Ազատաֆայից բերեցին լուրը...²⁷
 և ապա՝
 Զախմախվից անցավ զորքը²⁸...

19 Գ. Ղ ա ռ ի ռ չ ա ն յ ա ն, Մայիսյան ապստամբ. Հայաստ. 1920 թ., Երևան, 1955, էջ 35:

20 Հեազդիտ. և ազգ. ինստ. բան. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, զործ 3, տետր 31:

21 Գ. Ղ ա ռ ի ռ չ ա ն յ ա ն, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1955, էջ 71—72:

22 «Հայկական խորհրդային ֆուկլոր», Երևան, 1938, էջ 69:

23 Հեազդիտ. և ազգ. ինստ. բանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, դ. 3, տետր 40:

24 Նույն տեղում, տետր 35:

25 «Հայկ. խորհրդ. ֆուկլոր», Երևան, 1938, էջ 65:

26 Ե. Հ ա ռ ո թ յ ո ն յ ա ն, Հայ. ժող. պատմ., պրակ 10, Երևան, 1960, էջ 175:

27 Հեազդիտ. և ազգ. ինստ. բան. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆ., դ. 3, տ. 35:

28 Նույն տեղում:

Ձախմախյու գյուղը ռազմական նշանակություն ունեւր Աղստաֆա-Ղաղախ-Իջևան ճանապարհով անցնող զորքի համար, Մալխյան ապստամբության օրերին Իջևանի պարտիզանների շտաբը տեղավորված է եղել Ձախմախյու գյուղում²⁹:

Կարմիր բանակի զորամասերի հետագա առաջընթացի մասին երգերում կան հիշատակություններ. «Օրդուն հասավ ճալի ձորը»³⁰: Ժալան վայր է Իջևանի շրջանում, ռազմական կարևոր նշանակություն ունեցող Կեռ կամուրջի մոտ (Կրիվոյ) և այլն:

Կարմիր զորամասերը դիմադրության են հանդիպում և տեղի են ունենում տեղական լուրջ մարտեր, որոնց հիշողությունները պահպանված են Իրդերում: Այսպես, օրինակ,

Ջաղացի մոտ բռնին դիւր
Կամանյիւրն էր մեծը իւր...³¹

կամ՝

Ջարխեշից եկավ բյումազը,
Անցան մեր գուրբի քամակը...³² և այլն:

Դաշնակցության դորքը, կառավարության տեղական պաշտոնյաները շատ շուտով համոզվեցին, որ բացահայտ դիմադրություն կազմակերպել չեն կարող և դիմեցին փախուստի: Այդ փախուստն ու խուճապը չեն վրիպել երգի ուշագրությունից.

Ուզունքայայից բարձեցին ավտոն,
Պետը մոռացավ հագնել յուր պալտոն.
Շուտ արա, ասավ, ձին քաշիւր Անտոն...³³

կամ՝

Սեպուհը ասաց, մեր պանը գուր է,
Արամը կանչեց, Մուրադը ուր է.
Փախիւր այ դաշնակ, պանանը եկավ
Քո վիզը կտրող դանակը եկավ...³⁴:

Խմբապետ Սեպուհը Ալեքսանդրապոլում մալխյան ապստամբության հետ հաշվահարդար տեսնելուց հետո, նույն նպատակով ժամանել էր Իջևան-Դիլիջան: Նրա գործակիցներից էր նաև խմբապետ Մուրադը, որը կարմիր պարտիզանների կողմից սպանվեց 1920 թ. հունիսի 26-ին Կեռ (Կրիվոյ) կամուրջի մոտ³⁵: Ի դեպ, այդ մասին պահպանվել է հիշողություն «Օրդուն եկավ սարի փեշեն» երգում:

«Գուլլեն Կոնավ Մուրադի դոշեն...»³⁶:

Իջևանում էր հաստատվել Հայաստանի հեղկոմը, Իջևանից ի լուր ամենքին հայտարարվեց. թե սոցիալիստական հեղափոխությունը Հայաստանում հաղթանակել է.

Իջևանին հանին դրոշը,
Էկավ մեծավորի խոշը...³⁷:

Քննվող երեք երգերում հիշատակվում են մի շարք վայրերի անուններ, ուր տեղի են ունեցել այս կամ այն մարտերն ու անցքերը, և որոնք դեր են խաղացել կարմիր զորամասերի առաջխաղացման ժամանակ. Աղստաֆա, Ուզունթալա, Իջևան, Ժալա, Ձախմախյու, Ջարխեշ և այլն, ինչպես նաև պատմական անձնավորություններ, որոնք կոսպված են եղել Իջևան-Դիլիջան շրջաններում ծավալված իրադրությունների հետ. Արարատով, Սեպուհ, Մուրադ, Խատիսով և այլն:

29 Գ. Օ դ ա ն ե զ ո վ, Ձինվորի օրագրից, Երևան, 1956, էջ 135:

30 «Հայկ. խորհրդ. ֆուկլուր», Երևան, 1938, էջ 65:

31 Հնագիտ. և ազգ. ինստիտուտի բանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, դործ 3, տ. 35:

32 Նույն տեղում, տետր 40:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Գ. Օ դ ա ն ե զ ո վ, Ձինվորի օրագրից, Երևան, 1956, էջ 132:

36 «Հայկ. խորհրդ. ֆուկլուր», Երևան, 1958, էջ 65:

37 Հնագիտ. և ազգագր. ինստ. բան. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, տ. 3, տ. 35:

Պետք է նկատել, որ երգերում ընդհանրապես սակավ են հիշատակվում աչքի ընկած հեղափոխականների, կարմիր բանակի հրամանատարների անունները, մի երևույթ, որ միանգամայն հասկանալի է, եթե նկատի ունենանք գոյություն ունեցող քաղաքական պայմանները: Հեղափոխականները գործում էին ընդհատակում, նրանց անունները անհայտ էին ժողովրդին, ինչ վերաբերվում է կարմիր բանակին, ապա նաև նոր էր մուտք գործում Հայաստան, մինչդեռ խառնուրդին, Սեպուհին, Արարատովին ժողովուրդը ճանաչում էր ու նրանց գործունեությանն էլ տալիս էր արժանի բնութագրություն:

Երգերի մյուս խումբը հյուսված է Հայաստանի երիտասարդ սոցիալիստական հանրապետության դեմ յարձուցրած դաշնակցական խռովությունը ճնշելու հետ կապված մարտերի ու ռազմական գործողությունների շուրջը: Խռովության կենտրոնը գտնվում է Բաշ-Դյառնի գյուղում, այնտեղ էր տեղավորված շտաբը՝ ղեկավար Կ. Խարխանյանի ղիսավորությամբ³⁸: Հայտնի է, որ հիմնական ռազմական գործողությունները ծավալվեցին Բաշ-Դյառնի, էլառ-Ղամարլու-Վեդի շրջաններում: Այս շրջանների ղեկավարի մասին են պատմում «Ռուբենի երգը»³⁹ («էլյառա դուրան բոնի էր դուման»), «Դյառնիյա պալեն թալած բալչեխներ»⁴⁰ («Կոխվ էլավ Դավա-բոյին»), «Բաշ-Դյառնու կոխվը»⁴¹ («Օրդուն պարցրացավ Դյառնիի ծերը»), «Բալչեկի դորքը»⁴² («Բալչեկի դորքը Վեդիից էլավ»), իսկ «Պիմոտներ կապին Քյավառա վրեն»⁴³ երգում արտացոլվել են Քյավառում (Կամո) փետրվարյան խռովության հետ կապված մարտերի արձագանքները:

Երևանի հյուսիսային մասում տեղավորված դորամասերը խռովության ժամանակ մեկուսացվեցին ու շրջապատվեցին թշնամու կողմից: Թշնամին հասկանում էր այդ շրջանի՝ Իջևան-Դիլիջան-Սևան-էլառ-Երևան ճանապարհների կարևորությունը և աշխատում էր ամեն կերպ գրավել այն: Այս շրջանի կարմիր դորամասերի հետ միասին թշնամուն քաջաբար դիմադրում էին նաև տեղի պարտիզանները: էլառի շրջանում դաշնակցական զինվորների ու կարմիր պարտիզանների միջև տեղի ունեցած մարտի մասին է պատմում «Ռուբենի երգը»:

Թովերը կապեցին էյլառա դուզը,

էյ յոյ Լշեր է մացեր եմ տուսը⁴⁴:

Սկզբում պարտիզանները սպասում են օդնության հարևան գյուղերից, երգում հիշատակվում են Գյամբեզը, Զառը, Թաղադյուզը: Սակայն այդ գյուղերը գրավում է խմբապետ Մարտիրոսը և պարտիզանները շրջապատվում են թշնամու կողմից, բայց մինչև վերջ քաջաբար կռվում են:

Հանկարծ վրա տվին, դիրներ սուան,

Ու շատ պարտիզաններ Բաշի պես մեռան⁴⁵:

Քաջաբար ընկնում է նաև հրամանատարը՝ Ռուբեն անունով մի երիտասարդ, որը ըստ բանահավաքի տեղեկությունների, մոր միակ դավակն էր, կոտորածների ժամանակ գաղթել էր Արևմտյան Հայաստանից և բնակություն հաստատել Գյամբեզ գյուղում: Այս երգում նույնպես հիշատակված են պատմական վայրեր, որոնց մասին վերը նշվեց, ինչպես նաև անուն հանած մաուզերիստ-խմբապետներ, որոնք իրոք այդ շրջանում գործել են, ինչպես, օրինակ՝ խմբապետ Մարտիրոսը:

Պատմական ճշմարտություն է, որ խռովության օրերին խմբապետները դաժան դատաստան էին տեսնում գերի ընկած կարմիր զինվորների հետ: «Դյառնիյա պալեն թալած բալչեխներ» երգում հիշատակված է Գառնիում կատարված մի այդպիսի դեպքի մասին: Երգում նշված է, որ սկզբում կոխվ է եղել:

38 Տ. Բ ա ղ ղ ա ս ա Ր յ ա ն, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1931, էջ 17, 24: Շ. Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն յ ա ն, Հայ. ժող. պատմ., պրակ 10, Երևան, 1960, էջ 157:

39 Հնագիտ. և ազգագր. ինստիտուտի բանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆ., գ. 3, տ. 2:

40 Նույն տեղում, տետր 20:

41 Նույն տեղում, տետր 18:

42 Նույն տեղում, տետր 7:

43 Գ. Միքայելյանի գրառումներից:

44 Հնագիտ. և ազգագր. ինստ. բանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, գ. 3, տ. 2:

45 Նույն տեղում:

Կոնիվ ընկալի 'Իսվա-Ռոյին,
Ինչհան անմեղ Լեանդ զոնին,
Կերի ընկնող շատ զըմկոն ին...46:

Հստ րանահավարի Դավա-րոյինը Բաշ-Դյառնիի և Ղամարլուի միջև ընկած մի վերելքի անուն է:

Իսվլեիներ ջանել-ջիվան,
Ասված անի Սիփանի դիվան,
Մեռեր, ոտներ կապեց շվան,
Աման հասնի, ինչ զուլում Լ...47

Ինչպես այս, այնպես էլ նախորդ երգը ունի ընդհանրացող նշանակություն, շնայած դրանց հիմ-
քում ընկած են մասնավոր ժառանգություններ:

Ավանդական բանահյուսական հնարաններում ներկայացված են Գառնիի շրջանում տեղի
ունեցած մարտերը «Բաշ-Դյառնու կոնվը», իսկ Ղամարլուի շրջանինը (Աղբաշ գյուղ) «Բալշևիկի
զորքը» երգերում: Այս երկու երգն էլ աչքի են ընկնում դեպքերի մանրամասների պատկերմամբ,
բաղմամբով հայտնի և անհայտ դեմքերի, վայրերի հիշատակությամբ: Երկու երգում էլ կարմիր
զորամասերը հաղթանակ են տանում ու խմբապետ-մաուդերիստներին փախուստի մատնում:
Այդ է հիմարտությունը, դաշնակցական զորամասերի մնացորդները նահանջում են Ջանդեգուր
և ապա անցնում Պարսկաստան:

Մարտիրոս, Խրեզո, Մակեդոն, Սիփան,
Առուոշ, Պատվական... ծակերը մտան48:

կամ՝

Շուր աբեհ, խաւեհ, Մարտիրոս չկա,
Ղանգեզուրն ընցավ, Թավրեզ ի մրկա...49:

Կարմիր բանակը ճնշեց խոռվությունը, Հայաստանի բոլոր շրջաններում, ինչպես նաև Քյավառում:
«Պիմոտները կապին Քյավառ վրեն» երգում հիշատակվում է ինչպես բոլշևիկների հաղթական
մուտքը Ելենովկայից Քյավառ, այնպես էլ մաուդերիստ-խմբապետների՝ Նոդեհի, Լադդի-Հայկոյի
փախուստը Սալիմի բնոնանցքով:

Լուռու շրջանում գործող կարմիր պարտիզանների և կարմիր բանակայիների մեջ կենցա-
ղավարվել է քայլերդային մի երգ, որի մասին հիշատակում է Գ. Օղանեզովը:

Օրը օրին
Առաջ եմ գնում
Ու բշտամուն ջախջախում,
Խրամատները բշտամու
Գրոհում եմ. գրավում:
Գյուղերում հնդկում բնտրում,
Հողը կուլակից խլում,
Ու նորից առաջ գնում50:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար մղված մարտերի արձագանքները
մենք գտնում ենք նաև մեծ առաջնորդ Լենինին նվիրված ժողովրդական երգերում, դրանցից

46 Նույն տեղում, տետր 20:
47 Հնազիտ. և աղագղր. ինստ. բան. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, գործ 3, տ. 20:
48 Նույն տեղում, տետր 18:
49 Նույն տեղում:
50 Գ. Օղանեզով, Զինվորի օրագրից, Երևան, 1956, էջ 227:

հատկապես կարելի է նշել «Լենինի խաղը»⁵¹ (սենյակի սալը ընկավ...), «Լենինու խաղը»⁵², «Լենին ասավ»⁵³, «Լենինի երգը»⁵⁴ (սենյակի լենինի անունը), «Լենին փաշա» վիպերգը⁵⁵,

«Լենին փաշա» վիպերգը ոչ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության ժողովուրդների շրջանում ճանաչված ժողովրդական ստեղծագործություն է, այն թարգմանվել է ռուսերեն⁵⁶, Այս ծավալուն վիպական երգում պատմվում է ոչ թե Հայաստանում տեղի ունեցած տեղական նշանակություն ունեցող կոիվների մասին, այլ խոշոր չարիքի աշխարհացունց կոիվների՝ բան-վոր դասակարգի, պուդալիսթիան և համաշխարհային բուրժուազիայի միջև տեղի ունեցած արյունահեղ մարտերի մասին:

Ձաբկին-գարկվան՝ մի կողմ նույնաբ, մի կողմ ըոյաբ...⁵⁷:

Վիպերգի պատմական հիմքը քաղաքացիական կոիվներն են, որը փաթաթվեց Ռուսաստանի խորհրդային հանրապետության վրին Անտանտի երկրների և համաշխարհային բուրժուազիայի կողմից: Երգում թվարկվում են Չիո Ինգլիզ, Ֆրանգսըզ, Ամբոյան, Ժայպուն, Չին-Մալին, Մարր-Հիսար, Օսման-Տաճիկ, Աբա-Պարսիկ, Հարաշ-Ալման: Այս երկրների դործերը պարտվեցին ընչադուրկների վատ սպառնալիքն ու վատ սնված բանակի կողմից, որովհետև.

Էն վուր Լանին փաշի մարբեր ին, մեկ խոսի⁵⁸:

Մինչդեռ՝

Ձանգինաց գուրի մե զրսմ էր՝ փարով վարցկան,
Ձանգինաց գուրի մե զրսմ էր՝ շուխ պախված,
Ձանգինաց գուրի մե զրսմ էր՝ վախկուտ-բանուպի,
Մե զրսմ լե ուտար, անծանոթ մարբեր⁵⁹:

Լենին փաշայի դորքի առավելությունը նրա զաղափարական միասնության և նպատակասլացու-թյան մեջ է, այս միտքն է հաստատում վիպերգը:

Քննարկվող երգերը, ստեղծված լինելով դերադանցապես աշխատավորության կողմից, կրում են վերջինիս զաղափարախոսությունը, արտահայտում են աշխատավոր ժողովրդի վերաբեր-մունքը դեպի քաղաքական, ռազմական այն անցքերը, որոնց մասին վերը խոսվեց: Երգերի զա-հափարական բովանդակության էությունը՝ պայքարն է հանուն սոցիալիստական հեղափոխու-թյան և խորհրդային կարգերի հաստատման, որը առավել կամ պակաս հստակությամբ է գրսեոր-ված: Գաղափարական բովանդակությունից են ըխում երգերի յուրահատկությունները, որոնք այս երգերը տարբերում են նախորդ շրջանների երգերից իրենց որոշ ժամանակաշրջանի պատմական մշակութային երևույթի արտահայտություն:

Նախ՝ օտար նվաճողների և հայ ժողովրդի փոխաբեն այստեղ հանգես են գալիս նոր թշնամի ուժեր: Մի կողմից՝ հայ աշխատավոր ժողովուրդը, նրա շահերի պաշտպան բուլնիկները, կարմիր բանակը և կարմիր պարտիզանները, մյուս կողմից՝ ներքին ազգային զաշնակցական կառավա-րությունը և նրա շահերի պաշտպան խմբապետ-մարտիկների ուժերը: Առաջինների հա-կամարտությանը ու պայքարին փոխարինել է վերջինների հակամարտությունն ու պայքարը, ուր հայ ժողովուրդը վճռում է իր քաղաքական և տնտեսական ազատագրության ու ֆիզիկական զո-լության հարցերը:

Վերաբերմունքը՝ երգերում դեպի հատիսյաններն ու Արարատուները, Սեպուհներն ու Մար-տիրոսները ընդգծված բացասական է, իսկ դեպի բուլնիկները, պարտիզաններն ու կարմիր բանակը՝ ընդգծված համակրական: Ըստ որում, վերաբերմունքը դեպի մարտիկներն ու խմբապետ-ները արտահայտվում է տարբեր ձևերով: Օգտագործված է ավանդական բանահյուսությանը հատուկ ծաղրո:

51 «Լենինը հայ ֆուկլորի մեջ», 1936, էջ 77:

52 Նույն տեղում, էջ 80—81:

53 Նույն տեղում, էջ 93:

54 Նույն տեղում, էջ 106—107:

55 Նույն տեղում, էջ 129—138:

56 Творчество народов СССР, Москва, 1937, стр. 18—25.

57 «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 134:

58 Նույն տեղում, էջ 132:

59 Նույն տեղում, էջ 132:

Արարատովին տվին զըպե՛ր,
Ինչ պետք ա անի կն օարսաղ զիժը...60:

Կամ՝

Խառնիսով աղան հասավ մինչ Թարոս,
Շալակած ոսկին, մեկ էլ իր խաբուն...61:

Սպառնալիքը՝

Փախիր այ դաշնակ, պանակը եկավ,
Քո վիզդ կտրող աանակը եկավ...62:

Մինչդեռ կարմիր պարտիզանների, բռնակիների ու կարմիր բանակի մուտքը երգերում ողջու-
նում են.

Կարմիր պանակ, պարով եկար...63,

անվանում երանց երկրի տերը.

Փախիր, այ տաշնակ կարմիրենք եկան,
Փախիր, հեռացիր, երկրի տերն եկավ64,

Հաստատ հավատ տածում երա զործի վերջնական հաղթանակին, համոզված լինելով, որ փրկու-
թյունը միայն կարմիր բանակից կարող է լինել.

Մեզի փրկեց ծեր սուրբ զենք65

և այլն:

Քննարկվող երգերի զաղափարական բովանդակությունից է բխում նաև հեղափոխության
առաջնորդ լենինի զործունեության գնահատականը: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ
լենինի կերպարի արտացոլման հարցը ըստ էության լուսարանված ու ըստ արժանվույն գնա-
հատված է66: Քննարկվող երգերում, ինչպես նաև լենինյան ցիկլի երգերի այս խմբում, որոնք
կապ ունեն քաղաքացիական կռիվների հետ և, որոնց մասին նշվեց վերևում, շեշտվում է լենինի
զործունեության ռազմական բնագավառը, լենինն է դաշնակ-մաուզերիստների լծից հայ ժողովրդի
ազատարարը.

Վայ ձեռ զնալ ըլնի, զալ չըլնի,
Թո՛ւ ձե մե խոշ իղբալ չըլնի,
Դաշնակ փախավ էլ լալ չըլնի,
Հայաստան փրկիր, լենին ջան67:

Եվ ապա խորհրդային կարգերի հաստատման համար մարտնչող կարմիր բանակի կազմակերպիչն
ու զորավարը:

60 Հնագիտ. և ազգագր. ինստիտուտ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, դ. 3, տ. 4:
61 Նույն տեղում:
62 Նույն տեղում:
63 Նույն տեղում, տետր 35:
64 Նույն տեղում, տ. 40:
65 Նույն տեղում, տետր 35:
66 «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936 (խմբագրեց և ներածությունը գրեց Մ. Մելիք-
Օհանջանյանը), Ա. Ն ա զ ի ն յ ա ն, Սովետահայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1957,
Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Լենինը ժամանակակից հայ ժող. բանահյուսության մեջ, Երևան, 1961:
Գ. Գ Ր Ի զ Ո Ր Յ ա ն, Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը, Երևան,
1965:
67 «Լենինը հայ ֆուկլորի մեջ», էջ 107:

Լենինը դրկեց հրա զորքը,
Կտրեցին զաշնակի Բոֆր⁶⁸:

Ինչպես մայիսյան ապստամբության ժամանակ, այնպես էլ փետրվարյան խռովության օրերին հայ ժողովրդի հայացքը դեպի ուս ժողովուրդը «շեկ ուսը», ինչպես ընդունված է մեր բանահյուսության մեջ, և դեպի Լենինն էր.

Շուտ փողը լգացեմ, շեկ ըռուսն եկավ,
Լենինի կարմիր բայրաղը կկավ⁶⁹:

«Լենինու խյաղը»⁷⁰ երգում Լենինի անվան հետ միասին հիշատակվում են նաև հավատարիմ լենինյաններ Մյասնիկյանի, Լուկաշինի, Կասյանի անունները: Առանձնապես բազմակողմանի ու ծավալուն է ներկայացված Լենինի ռազմական գործունեությունը «Լենին փաշա» վիպերգում: Փաշա անվանումը իր ակունքներով ժողովրդական է, մի հանգամանք, որի միջոցով ընդգծվում է ժողովրդի սերն ու ակնածանքը դեպի մեծ առաջնորդը, նրա ռազմական հմտությունը, հզորությունն ու քաջությունը: Այդպես են մեծարվում նաև «Լենին փաշայում» գործող հրամանատարներն ու նշանավոր հեղափոխական գործիչները: Հստ վիպերգի, Լենինը խիզախ է, նա է առաջինը մարտահրավեր նետում «սուլթանը հուժամթի հիրես»,

Նս տը կովիմ, ասից, տ'ազատիմ զհախկառ⁷¹:

Վիպական գծերով է օժտված հեղափոխության առաջնորդը, Իսկական զորավարը գնում է առջևից ու վիպերգում Լենինը կարմիր դրոշմը ձեռքին առաջնորդում է իր զորքին՝ «թաղցածներած օողուն».

Լյ-կանչից Լանին փաշեն,
Խեծավ ուր ձին, Բըշից հառեչ...
Լենին փաշեն կերբեր հառեչ՝ սյունած բայրաղ...⁷²:

Լենինի ռազմական հմտությունը երևան է գալիս մարտերի վճռական պահին: Երբ նա տեսնում է, որ իր զորքը պետք է պարտվի, օգնության է կանչում ու նրա կոչին նորից գալիս են «խաղար-խաղար».

Քոմակ կկավ, Լենին փաշի կուղմ զորացավ...⁷³

Լենինի ռազմական հմտության շնորհիվ «թաղցածներած օողուն» հաղթանակում է.

Խրկիր հիստկեց Լանին փաշեն,
Թողեց զըմեն ուրան մարլեր,
Հաշխատավոր առից ուր քեի տակ...⁷⁴:

Լենինի, որպես զորավարի, զնահատականն վիպերգում լայն է ու սոցիալական առումով առավել խոր:

Երգերում ժողովրդի համակրանքն ու սերը վայելող գործիչները հերոսացված են, օժտված մարդկային քարեմասնություններով, մի երևույթ, որը բխում է վիպական բանահյուսության էությունից ու մասամբ է արտահայտվել այս երգերում, այդպիսին է պարտիզան Ռուբենը, այդպիսին է ըստ «Ղ. Ղուկասյան» երգի հեղափոխության մարտիկ Ղ. Ղուկասյանը:

68 Նույն տեղում, էջ 83:

69 Հնազիտ. և ազգ. ինստ. բանահ. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆ., գ. 3, տ. 18:

70 «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 130:

71 Նույն տեղում, էջ 133:

72 Նույն տեղում, էջ 136:

73 Նույն տեղում, էջ 135:

74 Նույն տեղում, էջ 138:

Վեն զաղափարի
Ազնիվ մարտնչող,
Նիզախ, Բաբարի,
Լ'ենկեր Ղուկասյան⁷⁵:

Չնայած այն բանին, որ թե՛ Ղ. Ղուկասյանը, թե՛ պարտիզան Ռուբենը զոհվում են, բայց հավատը զեպի նրանց դուրծի հաղթանակը չի խախտվում:

Գործող ու անունդ,
Կապրի հավիտյան,
Կարմիր ճաճատակ,
Անմահ Ղուկասյան⁷⁶:

Քննության առարկա երգերի մի մասը, ինչպես վերը նշվեց, քնարական շունչ ունի, Քնարականությունը հատկապես շեշտվում է կրկնակների օգտագործմամբ, որը մի կողմից զգացմունք, հուզականություն է հաղորդում երգին, մյուս կողմից՝ այն դարձնում զաղափարային ավելի նպատակասլաց: «Գլառնիչա պալեն թալած բալչնիյներ» երգի յուրաքանչյուր բառատողում կրկնվում է «Աման մերիկ, ինչ զուլում էր» արտահայտությունը՝ իմաստային տարբեր երանգներով, որը մի կողմից ողբերգականություն է մտցնում իրոք ողբերգական այդ զեպքի մեջ, մյուս կողմից շեշտում համակրանքը զեպի «ջահեւ ջիվան բալչնիյներ»։ Նույն նշանակություն ունի նաև «Կարմիր պանակ, բարով եկար» կրկնակիի «Զախմախվից անցավ զորքը» երգերում: ԵՂ. Ղուկասյան» երգում երիտասարդ հեղափոխականի անուն ազգանունը կրկնվում է տարբեր մակդիրներով՝ ազնիվ, արի, անմահ, որը մի կողմից երգին հաղորդում է նպատակասլաց քնավորություն, մյուս կողմից՝ ընդծում սերն ու համակրանքը զեպի Արդինայի ձորում զոհված հեղափոխականն ու նրա ընկերները: «Ռուբենի երգը» Խոսանց կրկնակի օգտագործման ստեղծում է Ռուբենի նպատակային հուզիչ ու դրամատիկական պատկերը: Բնությունն անզամ մասնակից է Ռուբենի մոր ու ընկերների վշտին:

էլառի դաշտերը ձուն է ու տուրան,
Սար ու Բար լացին ըրուրենի վրան⁷⁷:

Ժողովրդական երգերում գնդակը միշտ հերոսի կրծքին է կաշում, այս զեպքում էլ՝

Գուլլեն կալավ Ռուբենի դռնիցը...⁷⁸

Երգում Ռուբենի մոր՝ Սանամի ներկայությունը ավելի ուժեղացնում է զեպքի ազդեցությունը:

Սելը լծին, սպանվածին րևեցին,
Խեղճ Սանամի գլխին սևեր կապեցին⁷⁹:

Քննարկվող երգերն, իրենց յուրահատկություններով՝ հանդերձ, կրում են նաև նախորդ շրջանի նույն թեմատիկայի երգերի ազդեցությունը: Խոսքը վերաբերվում է զինվորի (սալդաթի) երգերից կրած ազդեցությանը, որը երևան է գալիս թե՛ ստեղծագործական միջոցների և թե՛ լեզվի հարցերում: Թեմայի, պայմանների ու հոգեվիճակների նմանությունը ենթադրում է արտահայտչական միջոցների նմանություն, մյուս կողմից՝ նոր ժողովրդական երգերը հաճախ են դիմում պատրաստի զեղարվեստական ձևերին, այն հարմարեցնում նոր բովանդակությանը: Ակնհայտ է «Փախիթ պրուս, եկավ ռուս» և «Փախի ալ դաշնակ» կրկնակների կապը: Հրանդների, զնդաջիրների տպավորությունը հայ զեղջուկի վրա եղել է շատ մեծ: Դեռևս 1877—78 թթ. կա-

75 «Հայկ. խորհր. ֆուկլոր», Երևան, 1936, էջ 69:
76 Նույն տեղում:
77 Հնադիտ. և ազգ. ինստ. քանահյուս. արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, դ. 3, տետր 2:
78 Նույն տեղում:
79 Նույն տեղում:

պակցությամբ երգվել է. «Ջելրան թուփեր կապեցին», իսկ քննարկվող երգերում՝ «Պլիմուտներ կապեցին», «Թոփերը կապեցին էլլարա դուզը» և այլն: Ինչպես նախորդ շրջանի զինվորի (սալ-դաթի) երգերում, այնպես էլ քննարկվող երգերում ուղղակի կենցաղի և տեխնիկայի հետ կապված երևույթների ու առարկաների անունները օգտագործվում են ուսուներեն: Բրանևիկ, պալիդոն, պլիմոտ, կամանդիր և այլն: Ըստ էության, նորություն էին կարմիր բանակ, բուլչեիկ, հեղկոմ, կարմիրներ, պարտիզան և նման բառերը, որոնք նոր երևույթների հետ էին կապված: Երգերը բարբառով չեն հորինված, սակայն կրում են այն բարբառի ազդեցությունը, ուր ստեղծվել և կենցաղավարվել են: Նրանց լեզվի մեջ ընդհանրապես զգալի է միօրինակությունը: Կան նաև զրական հայերենով հորինված երգեր (սօրը օրին», «Խատիսյանը աշխարհ խաբեց», «Ղ. Ղուկասյան»):

Այսպիսով, մայիսյան ապստամբությունն ու խորհրդային կարգերի հաղթանակը Հայաստանում 1920 թ. նոյեմբերին, 1921 թ. առաջին կիսում ծավալված քաղաքացիական կռիվները նյութ են տվել ժողովրդական երգերին, երգեր, որոնք կազմելով հայ ժողովրդի ուղիղ և զինվորի երգերի ընդհանուր շղթայի մի օղակը, ունեն իրենց յուրահատկությունները, կապված դարաշրջանի տնտեսական, քաղաքական-հասարակական պայմանների հետ: Նրանց ամենահիմնական յուրահատկությունն այն է, որ արտացոլում են հայ աշխատավոր ժողովրդի պայքարի զրվադները՝ հանուն սոցիալիստական հեղափոխության և խորհրդային կարգերի հաստատմանն Հայաստանում: